



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՐԵՎԵԼԵԱՆ ՈՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱՔ

Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդներու խորհուրդը, հովանաւորութեամբ եւ առաջնորդութեամբ Հայ Առաքելական, Ասորի Ուղղափառ եւ Ղրպտի Ուղղափառ Եկեղեցիներուն, տարուան ընթացքին միատեղ պատարագ, եկեղեցական արարողութիւններ, եկեղեցականաց հաւաքներ, երիտասարդաց թէ աշակերտական աշխատանքային հանդիպումներ կը կազմակերպէ:

Միջ-թեմական կիրակնօրեայ վարժարաններու կազմակերպիչ յանձնախումբին նախաձեռնութեամբ ու հովանաւորութեամբ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդ Սրբազան Հայրերուն, Շաբաթ, 19 Նոյեմբեր 2011ին, տեղի ունեցաւ միջ-կիրակնօրեայ վարժարաններու աշակերտական 7-րդ միօրեայ դաստիարակչական ծրագրով տարեկան հաւաքը, Պըրպէնքի Ս. Եփրեմ եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00-էն յետմիջօրէ ժամը 3:00:

Ս. Պատարագը մատուցեցին Թեմիս Բարեշան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ Գերշ. Տ. Եուճին Քափլան Արքեպիսկոպոսը, եւ Ղրպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ Գերշ. Տ. Սրապիոն Արքեպիսկոպոսը:

Ներկայ էին Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, Արժ. Տ. Նարեկ Ա. Քհնյ. Փեղիվանեան, Տ. Աշոտ Քհնյ. Գամպուրեան, Տ. Կոմիտաս Քհնյ. Թորոսեան եւ քոյր եկեղեցիներու հոգեւորականներ:

Ս. Պատարագի ընթացքին, աշակերտներ իրենց մայրենի լեզուներով երգեցողութեան մասնակցեցան: Աշակերտական հաւաքին նշանաբանն էր "Յիսուս եւ մանուկները":

Ս. Պատարագի ավարտին աշակերտներ Ս. Հաղորդութիւն ստացան, իսկ Առաջնորդ Սրբազաններ իրենց քաջալերական ու սրտի խօսքը փոխանցեցին Կիրակնօրեայ դպրոցներու աշակերտութեան:

Հաւաքական խմբանկարէ եւ ճաշէ ետք, շուրջ հարիւր եօթանասուն աշակերտներ, տարիքի համաձայն, բաժնուեցան խումբերու եւ վարիչ-ուսուցիչներու առաջնորդութեամբ տեղի ունեցաւ հոգեւոր բնոյթի զարգացման մրցում եւ սուրբ գրային նիւթերու շուրջ խաղեր: Յաղթական խումբեր ստացան բաժակներ, իսկ մրցումին մասնակցող աշակերտներ՝ շուրի յատուկ շիշեր, Ուղղափառ Եկեղեցիներու միութիւնը խորհրդանշող

գծանկարով:

Միօրեայ դաստիարակչական հաւաքի աւարտին, աշակերտներ, դաստիարակ ուսուցիչ-ուսուցչուհիներ, քրիստոնէական հաւատքի եւ հաւաքական կեանքի օրինակելի մթնոլորտի մէջ փոխադարձ փորձառութիւններով հարստացած՝ գոհունակ սրտով վերադարձան իրենց շրջանները:

ORIENTAL ORTHODOX CHURCHES ANNUAL SUNDAY SCHOOL BIBLE COMPETITION

On Saturday, November 19th, 2011, the 7th annual Oriental Orthodox Churches Sunday School gathering and Bible competition was held at St. Ephraim Syriac Orthodox Cathedral in Burbank, under the auspices of the Council of Oriental Orthodox Bishops and hosted by the Syriac Church.

The day began with Divine Liturgy, celebrated jointly by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan, and H.G. Bishop Serapion.

The Prelate was accompanied by Very Rev. Father Muron Aznikian, Archpriest Fr. Nareg Pehlivanian, Rev. Fr. Ashod Kambourian and Rev. Fr. Gomidas Torossian.

Nearly 170 Sunday School students participated in the event, the theme of which was "Jesus and the Children".

During the Divine Liturgy, the students participated in the singing in their respective languages, and received Holy Communion.

At the conclusion of the service, the Prelates welcomed the students and conveyed their message on this occasion.

The Bible competition then began with the students assigned to groups according to age. The winning teams received trophies, and all students received gifts for their participation.